ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶՊԵՏ

Կ Ա Ր Գ Ա Դ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

01 մարտի 2011 թվականի թիվ 10 - Ա

ՀՀ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ՄԻ ՇԱՐՔ ՀԱՄԱՅՆՔՆԵՐՈՒՄ ՌԱԴՈՆԻ ԱՐՏԱԶԱՏՄԱՄԲ ՏԱՐԱԾՔՆԵՐԻ ՀԱՅՏՆԱԲԵՐՄԱՆՆ ՈՒ ԴԵՏԵԿՏՈՐՆԵՐԻ ՏԵՂԱԴՐՄԱՆՆ ԱՋԱԿՑԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԽՈՒՄԲ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997թ. մայիսի 6-ի թիվ ՆՀ -728 հրամանագրի 1.6-րդ կետով և ի կատարումն Հայաստանի Հանրապետության վարչապետի 14.02.2011թ. թիվ 02/16.6/1892-11 հանձնարարականի,

կարգադրում եմ.

1. ՀՀ կառավարությանն առընթեր միջուկային անվտանգության կարգավորման պետական կոմիտեի օժանդակությամբ ՀՀ Տավուշի մարզի Իջևան, Դիլիջան, Բերդ, Նոյեմբերյան, Արծվաբերդ, Բերդավան, Աչաջուր, Կոթի և Բագրատաշեն համայնքներում ռադոնի զգալի արտազատմամբ տարածքների հայտնաբերման աշխատանքների իրականացմանը և համապատասխան դետեկտորների տեղադրմանն աջակցելու նպատակով ստեղծել աշխատանքային խումբ հետևյալ կազմով.

Խմբի ղեկավար՝	Մ. Մխիթարյան - մարզպետարանի աշխատակազմի ՏԻ և ՀԳՄ հարցերով վարչության պետ
Անդամներ՝	Ա. Փաշինյան - մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության պետ
	Ա. Մարդանյան - մարզպետարանի աշխատակազմի ՏԻ և ՀԳՄ հարցերով վարչության գլխավոր մասնագետ
	Մ. Ղալումյան - մարզպետարանի աշխատակազմի քաղաքաշինության վարչության գլխավոր մասնագետ
	Ս. Քամալյան - մարզպետարանի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության գլխավոր մասնագետ
	Ս. Գևորգյան - մարզպետարանի աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության առաջատար մասնագետ

2. Աշխատանքային խմբին՝ համագործակցել ՀՀ կառավարությանն առընթեր միջուկային անվտանգության կարգավորման պետական կոմիտեի մասնագետների և վերը նշված համայնքների ղեկավարների հետ՝ դետեկտորների տեղադրման վայրերի ընտրության և սահմանված ժամկետներում աշխատանքների կազմակերպման համար:
3. Սույն կարգադրության հսկողությունը դնել ՀՀ Տավուշի մարզպետի տեղակալ Լ. Սարգսյանի վրա:

ՄԱՐԶՊԵՏ Ա. ՂՈՒԼԱՐՅԱՆ

ք. Իջևան
01 մարտի 2011թ.